# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐՃՍՑԺՃՈ» (ՍՃՔՃՐԹՑԾԼՕ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 15 - 16 (16313) ՇԱԲԱԹ, 7 ՄԱՐՏԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵՔ ՉԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ»

### ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԿԿՐՃԱՏՎԵՆ

*Վրաստանի կառավարությունը կրճատում է վարչական ծախսերը: Այդ մասին հայտարարվել է նախարարների կաբինետի նիստում:*



Պետական գերատեսչությունները, Վրաստանի վարչապետի հանձնարարությանը համապատասխան, «գործողությունների իրենց պլանը» երկրի ֆինանսների նախարարություն կներկայացնեն մարտի 16-ից ոչ ուշ: Ծախսերի կրճատումը չի վերաբերի ենթակառուցվածքային նախագծերին եւ սոցիալական ծախսերին:

Կառավարության հանձնարարականին համապատասխան՝ ընթացիկ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ



Վրաստանի Նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Եվրոպայի լիբերալների եւ ժողովրդավարների ալյանսի նախագահ Գրեմ Ուոթսոնի հետ, որը պաշտոնական այցով գտնվում էր Թբիլիսիում:

Հանդիպմանը քննարկվեցին տարբեր կուսակցությունների միջեւ համագործակցության եւ եվրաինտեգրման գործընթացում այդ համագործակցության հնարավոր աջակցության հետ առնչվող հարցեր: Հանդիպմանն ընդգծվեց նաեւ Եվրամիության եւ Վրաստանի միջեւ ստորագրված ասոցիացման համաձայնագրի բացառիկ նշանակությունը: Կողմերը քննարկեցին նաեւ տարածաշրջանային անվտանգության հարցեր:

ԱՅՑ

## ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՈՍՆԱԿԸ ԱՄՆ-ՈՒՄ

*Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին եւ խորհրդարանի միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն պաշտոնական այցով գտնվում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներում:*



Այցի շրջանակներում՝ Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի օգնական Վիկտորյա Նուլանդի, ազգային ժողովրդավարական ինստիտուտի ներկայացուցիչների, Համաշխարհային բանկի նախկին նախագահ Բոբ Զոելիկի եւ «Ֆրիդոն Հաուս» միջազգային կազմակերպության նախագահ Մարկ Լագունի հետ: Հանդիպումներում քննարկվեցին երկրների միջեւ հարաբերություններին առնչվող հարցեր, Վրաստանում եւ տարածաշրջանում զարգացող իրադարձությունները, համագործակցության հեռանկարները եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման գործընթացը:

ՄԱՐՏԻ 8 - Ը ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆՆ Է

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈ՛ՒՄ ԵՆՔ, ՍԻՐԵԼԻՆԵ՛Ր



*Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային տոնն է:*

*Սիրելի՜ մայրեր, քույրեր, տատիկներ, ընկերուհիներ, հարգարժա՜ն կանայք, ի սրտե շնորհավորում ենք այս գեղեցիկ տոնի առթիվ: Ցանկանում ենք ձեզ առողջություն, երջանկություն, սեր եւ ամենայն բարիք:*

(Խորագրի շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

*Մարտի 6-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին եւ Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը Թբիլիսիում ստորագրեցին երկու երկրների արդարադատության գերատեսչությունների միջեւ համագործակցության հուշագիր:*




Կողմերը կփոխհամագործակցեն արդարադատության ոլորտում առկա հարցերի շուրջ: Մասնավորապես, համատեղ կգործեն նոտարների, դատավճիռների կատարման, քաղաքացիական ակտերի եւ իրավաբանական անձանց գրանցման, նաեւ դատական ոլորտում առկա տարբեր հարցերի ուղղությամբ: Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Մինչեւ ստորագրման արարողությունը՝ տեղի ունեցավ երկու երկրների արդարադատության նախարարների հանդիպումը, որտեղ որոշում ընդունվեց Երեւանում անցկացնել Վրաստան-Հայաստան իրավական հարցերին նվիրված խորհրդաժողով: Բացի այդ, Վրաստանի արդարադատության նախարարն իր հայ գործընկերոջը հրավիրեց մասնակցել հունիսին Թբիլիսիում անցկացվելիք OGP (բաց կառավարման գործընկերության) խորհրդաժողովին:

Հայկական կողմը համագործակցության համար շնորհակալություն հայտնեց Վրաստանի արդարադատության նախարարությանը:

Նշենք, որ Վրաստանի եւ Հայաստանի արդարադատության նախարարությունների միջեւ համագործակցության վերջին փաստաթուղթը ստորագրվել էր 15 տարի առաջ, իսկ հիմա սկսվում է համագործակցության նոր փուլ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

## ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՐԿԻՆ ԿՏՐՎԻ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՌՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»



*Վերջին ժամանակներում առանձնակի հրատապություն ստացած եւ երկրի բնակչության որոշակի հատվածին հուզող երկքաղաքացիության, Վրաստանի քաղաքացիության ընդհատման, միգրացիայի հետ կապված հարցերին հստակ, սպառիչ, իրավասու պատասխանների համար «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը հանդիպում ունեցավ Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու հետ: Հանդիպման մասին նշվեց նաեւ արդարադատության նախարարության պաշտոնակայն կայքում:*

*Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Վրաստանի արդարադատության նախարարի հատուկ մեր թերթին տրված հարցազրույցը:*

***- Տիկին Թեա, շնորհակալություն, որ անմիջապես համաձայնվեցիք մեզ հետ հանդիպմանը: Այն հարցերը, որ մտադիր ենք ներկայացնել Ձեզ՝ հուշել են մեր ընթերցողներն ու որոշ լրատվամիջոցների հրատարակումները, ինչը լայն արձագանք է առաջացնում Վրաստանի, մասնավորապես Սամցխե-Ջավախեթիի բնակիչների որոշակի հատվածում: Սակայն, մինչեւ հարցերի առաջադրումը, մի քանի խոսք երկու շաբաթ առաջ Ախալքալաքի եւ Նինոծմինդա կատարած Ձեր այցելությունից ստացած տպավորությունների մասին:***

- Որպես նախարար ես առաջին անգամ եղա Սամցխե-Ջավախեթիում եւ շատ եմ ցավում, որ մինչ այդ չէի այցելել այդ երկրամաս: Այն, ինչ տեսա ենթակառույցների առումով, ինձ դուր չեկավ: Զարմանալի է, որ նախորդ իշխանությունը, որն իրեն ներկայացնում էր որպես շինարար, ինչո՞ւ ոչինչ չէր ձեռնարկել, որպեսզի մեր համերկրացիների համար նորմալ պայմաններ ստեղծեր: Դա հարկ է շտապ ուղղել: Այն շենքը, որը արդարադատության նախարարությունն ունի Նինոծմինդայում՝ անընդունելի է: Վերջերս ավարտվեց մրցույթը եւ այնտեղ կանցկացվի հիմնարար վերանորոգում, որպեսզի այն դառնա առավել քաղաքակիրթ վայր, որպեսզի մեր քաղաքացիները ուրախությամբ եւ ոչ թե ստիպողական լինեն այնտեղ: Նշեմ նաեւ, որ Նինոծմինդայի մեր գրասենյակը շատ է հիշեցնում Լանչխութիի գրասենյակին: Այնպես որ, չկարծեք, որ Նինոծմինդան այդ առումով բացառություն է: Այդ երկու գրասենյակները միանման վթարային վիճակում են եւ այս տարի երկուսն էլ կվերանորոգվեն:

Ինչ վերաբերում է Ախալքալաքիին, ապա վերադառնալուց հետո վարչապետին ներկայացրեցի իմ նկատառումները, եւ նա մեծ պատրաստակամությամբ խոստացավ նպաստել դրանց իրականացմանը: Ախալքալաքիում արդեն գտել ենք համապատասխան հողատարածք, եւ կկառուցենք արդարադատության տուն, որը կլինի լավագույններից եւ ընդօրինակելիներից մեկը մեր երկրում: Մինչ օրս Սամցխե-Ջա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵՔ ՉԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տարում նվազագույնի կհասցվեն վարչական շենքերի նորոգման ծախսերը, փափուկ կահույքի ձեռքբերումը, կսահմանափակվի նոր ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերումը, 30 տոկոսով կկրճատվեն վառելիքի ձեռքբերման ծախսերը: Բացի այդ, նվազագույնի կհասցվեն գործուղումները, 20 տոկոսով կկրճատվեն այսպես կոչված ներկայացուցչական ծախսերը եւ ուսումնական արձակուրդները կօգտագործվեն միայն անհետաձգելի անհրաժեշտության դեպքում:

Կառավարությունը վարչական ծախսերը կրճատելու խնդրանքով դիմել է նաեւ բյուջետային այն կազմակերպություններին, որոնք հաշվետու չեն իրեն՝ խորհրդարանին, դատարանին, մունիցիպալիտետներին, այդ թվում՝ Թբիլիսիի քաղաքապետարանին, եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետությանը:

Մարտի 5-ին կայացած կառավարության նիստում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին կոչ արեց պատասխանատվություն ստանձնել չկատարած աշխատանքների համար: Նիստում տնտեսական բլոկի նախարարները տեղեկատվություն ներկայացրին 2015 թվականի առաջին երկու ամիսների բյուջեի կատարման մասին:

Իր զեկուցման մեջ ֆինանսների նախարար Նոդար Խադուրին նշեց, որ ենթակառուցային նախագծերի իրականացման թերակատարում է գրանցվել կրթության, էներգետիկայի, գյուղատնտեսության եւ առողջապահության նախարարություններում: Նախարարի հավաստմամբ, ավելի հստակ տեղեկատվություն կստանան միայն եռամսյակի վերջին:



«Կրկին անգամ նախարարներին կոչ եմ անում ակտիվանալ եւ հիշեցնում, որ նրանք պատասխանատվություն են ստանձնելու չկատարած աշխատանքի համար, քանզի մենք արագացված տեմպերով պետք է կատարենք սկսած նախագծերը, որոնք նախատեսված են բյուջեում: Այնպես որ, լինի դա վարչության նախագահ, թե սակրեբուլոյի նախագահ, մենք պարտադիր կարգով կբարձրացնենք նրա պատասխանատվության հարցը: Դա վերաբերում է նաեւ նախարարներին, որպեսզի նրանք առավելագույնս վերահսկեն իրենց գերատեսչություններով իրականացվող նախագծերի կատարմանը: Ըստ երեւույթին, վարչության նախագահների ու ընտրված քաղաքապետերի մոտ ծագել է անձեռնմխելիության զգացում: Ցանկանում եմ ընդգծել, որ նրանք սխալվում են, քանզի պատասխանատվություն են ստանձնել ժողովրդի առջեւ»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, ոչ ոք պատասխանատվությունից չի խուսափի, եթե նրանց աշխատանքն անարդյունավետ է եւ չեն իրականացնում ստանձնած պարտավորությունները:

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱԴԻՐ ՉԷ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՀԱՐԿԵՐԸ

*Վրաստանի կառավարությունը մտադիր չէ բարձրացնել հարկերը:*

Մեկնաբանելով Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից Վրաստանի իշխանություններից տրված հանձնարարականները, որի համաձայն՝ Վրաստանին առաջարկված է բարձրացնել հարկերը եւ նվազեցնել ծախսերը, այդ մասին հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին: «Եթե հաշվի առնենք նոր իրականությունը, դրամական քաղաքականությունը, մենք՝ ելնելով բանկչության սոցիալական շահերից, ընդունեցինք որոշում չբարձրացնել հարկերը: Ինչ վարաբերում է ծախսերին, ապա դրանց նվազեցումը կվերաբերի միայն ընթացիկ գումարներին, հիմնարար եւ սոցիալական ծախսերը չեն նվազեցվի»,- հայտարարեց Նոդար Խադուրին եւ հավելեց, որ կառավարությունը ներկայումս գործում է բյուջեի հստակեցման ուղղությամբ:

Իր հերթին, Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ հարկերի բարձրացման փոխարեն, իշխանությունները մտածում են դրանց նվազեցման մասին: «Հարկերի մի մասը, կարծում եմ, մենք պետք է ազատականացնենք: Իսկ ինչ վերաբերում է ծախսերին, ապա այդ ուղղությամբ ինտենսիվ աշխատանք է իրականացվում»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

ԱՅՑ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Ռումինիայում:*

Այցի շրջանակներում՝ Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ իր ռումին գործընկեր Վիկտոր Պոնտի, Ռումինիայի Սենատի նախագահ Կելին Պոպեսկու-Տերիչանու հետ: Հանդիպումներում քննարկվեցին երկկողմ քաղաքական, տնտեսական եւ մշակութային հարաբերությունների խորացման հեռանկարները: Առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանի եւ Եվրամիության միջեւ հարաբերությունների, ասոցիացման համաձայնագրով նախատեսված բարեփոխումների եւ Ռիգայում անցկացվելիք արեւելյան գործընկերության առաջիկա գագաթաժողովին առնչվող հարցերին:

Իրակլի Ղարիբաշվիլին ռումինական կողմին շնորհակալություն հայտնեց Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականությանը ցուցաբերած աջակցության եւ այն նախագծերի իրականացման համար, որոնք ուղղված են այցեգրային պայմանագրի ազատականացմանը, տարերային աղետների ռիսկերի նվազեցմանն ու վերահսկողության ուժեղացմանը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

*Վրաստանի ղեկավարության ներկայացուցիչներից ոչ մեկը չի ժամանի Մոսկվա՝ մասնակցելու Հայրենական Մեծ պատերազմում հաղթանակի 70-ամյակի տոնակատարությանը:*



Այդ մասին Պրահայում հայտարարեց Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն:

«Վրաստանի ղեկավարության ներկայացուցիչներից որեւէ մեկի ժամանումը Մոսկվա՝ մասնակցելու ֆաշիզմի դեմ հաղթանակի 70-ամյակի տոնակատարությանը, չի պլանավորվում»,- ասաց Զուրաբ Աբաշիձեն՝ Ռուսաստանի արտաքին գործերի փոխնախարար Գրիգորի Կարասինի հետ բանակցությունների հերթական փուլի ավարտից հետո:

Աբաշիձեի խոսքով՝ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ բարձր մակարդակի հանդիպման հնարավորության վերաբերյալ հայտարարություններ հնչել են երկուստեք, բայց հարկավոր է վաղօրոք վստահ լինել, որ այն արդյունավետ կլինի, կոնկրետ որոշումներ կընդունվեն առկա հիմնախնդիրների վերաբերյալ, ինչն առայժմ քիչ հավանական է: Ինչպես հայտնել է Վրաստանի ներկայացուցիչը, Աբաշիձեի եւ Կարասինի հերթական հանդիպման ուշադրության կենտրոնում եղել են երկու երկրների առեւտրատնտեսական հարաբերություններն ու հումանիտար հարցերը:

ՍՊԱՌՆԱԼԻՔ

# ԱՌԿԱ Է ԲՐՅՈՒՑԵԼՅՈԶԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՎՏԱՆԳ

*Սամցխե-Ջավախեթիի, Կախեթիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում մեծ է բրյուցելյոզի տարածման հավականությունը:*

Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ տարածաշրջաններում վարակման ոչ մի դեպք դեռեւս չի գրանցվել, այնտեղ արդեն իրականացվում են կանխիկ միջոցառումներ, տեղի բնակիչները պարտավոր են անցկացնել ընտանի անասունների լաբորատոր ստուգումները, հակառակ դեպքում նրանք կտուգանվեն: Ֆերմերները, ովքեր կհրաժարվեն իրականացնել անասունների ստուգումները՝ կզրկվեն նրանց արոտավայր դուրս բերելու իրավունքից:

Մասնագետների տվյալներով, շուրջ մեկուկես միլիոն գլուխ անասունից ստուգվել են մի քանի հազարը: Նշենք նաեւ, որ անասնագլխաքանակի պաշտոնական վիճակագրություն գոյություն չունի: Անասնագլխաքանակի ստույգ տվյալների բացակայությունն է՛լ ավելի է մեծացնում համաճարակի ծագման հավանականությունը: Նշենք, որ բրյուցելյոզի վարակման վերջին դեպք գրանցվել էր անցյալ տարի: Վարակիչ այդ հիվանդությունը հաճախ ավարտվում է անասունի անկումով, հիվանդ անասունի հետ շփվելիս, այն անցնում է մարդկանց վրա:



ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՍՊԱՆՎԵԼ Է ԲՈՐԻՍ ՆԵՄՑՈՎԸ

*Ռուս ընդդիմադիր գործիչ Բորիս Նեմցովը փետրվարի 27-ի գիշերը սպանվել է Մոսկվայի կենտրոնում: Նրա վրա արձակվել է ոչ պակաս քան 7-8 կրակոց, որոնցից չորսը դիպել են թիկունքին, նա տեղում մահացել է: Քաղաքական գործչին կրակել են սպիտակ ավտոմեքենայից, որի մակնիշն արդեն հայտնի է: Նեմցովը զբոսնելիս է եղել Ուկրաինայից ժամանած իր ծանոթի հետ, երբ պատահել է դեպքը:*

*Հետաքննությունը քննարկում է մի քանի վարկած, որոնց թվում են՝ ինչպես քաղաքական, այնպես էլ կենցաղային վարկածներ:*

ԱՄՆ

## ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԵԿ ՏԱՐՈՎ ԵՐԿԱՐԱՑՎԵԼ ԵՆ

*ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման մեկ տարով երկարացրել է Ռուսաստանի դեմ պատժամիջոցները, որոնցից առաջինները սահմանվել էին 2014 թվականի մարտին:*

*Առաջին անգամ «արտակարգ դրության ռեժիմը» Ռուսաստանի նկատմամբ, որը, ամերիկյան վարչակազմի կարծիքով, Ուկրաինայի դեմ իր գործողություններով սպառնալիք է ստեղծում ԱՄՆ-ի ազգային անվտանգությանն ու արտաքին քաղաքականությանը, Օբամայի հրամանով սահմանվել է 2014 թվականի մարտի 6-ին:*

*Ինչպես պարզաբանվում է, նախագահը մեկամյա ժամկետի ավարտից 90 օր առաջ պարտավոր է որոշակիություն մտցնել «արտակարգ դրության ռեժիմը» նոր ժամկետով երկարացնելու հարցում: Ավելի վաղ Օբաման Կոնգրես ծանուցում էր ուղարկել նման որոշման անհրաժեշտության մասին: Այսպիսով, Ռուսաստանի դեմ ԱՄՆ-ի պատժամիջոցներ նախատեսող ռեժիմը մարտի 6-ից հետո երկարացվում է եւս մեկ տարով:*

*ԱՄՆ-ի իշխանությունները Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներ են սահմանել մի քանի փուլով. 2014 թվականի մարտի 6-ից բացի, համապատասխան որոշումներ են ընդունվել մարտի 16-ին, մարտի 20-ին եւ դեկտեմբերի 19-ին:*

ՈՒԿՐԱԻՆԱ

## ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

*Եվրամիությունը, Դանիան եւ Մեծ Բրիտանիան պատրաստ են ընդհանուր առմամբ ավելի քան 40 մլն դոլար հատկացնել Ուկրաինային հումանիտար օգնություն ցուցաբերելու համար: Այդ մասին ասված է ՄԱԿ-ի հումանիտար հարցերի համակարգման վարչության զեկույցում, որը հրապարակվել է մարտի 2-ին:*

*Փետրվարի 24-ին ՄԱԿ-ը ներկայացրել է Ուկրաինայի հումանիտար օժանդակման 2015 թվականի նորացված ծրագիրը, որը նախատեսված է 3,2 մլն մարդու համար եւ գնահատվում է 316 մլն դոլար:*

*Ինչպես նշվում է վարչության զեկույցում, Մեծ Բրիտանիան հայտարարել է 15 մլն ֆունտ ստեռլինգ (մոտավորապես 25 մլն դոլար) տրամադրելու մասին, Եվրամիությունը կհատկացնի 15 մլն եվրո (շուրջ 16,5 մլն դոլար), Դանիան՝ 1,3 մլն եվրո (մոտավորապես 1,4 մլն դոլար):*

## ՊԱՅԹՅՈՒՆ ԱԾԽԱՀԱՆՔՈՒՄ

*Դոնեցկի Զասյադկոյի անվան հանքում պայթյուն է տեղի ունեցել մարտի լույս 4-ի գիշերը:*

*Պայթյունի զոհերի թիվը հասել է 32-ի:*

*Նշենք, որ Զասյադկոյի անվան հանքը համարվում է Ուկրաինայի ածխարդյունահանման խոշորագույն ձեռնարկություններից մեկը: Վերջին 15 տարվա ընթացքում հանքում տեղի է ունեցել հինգ խոշոր վթար, որոնց զոհ է դարձել գրեթե 300 մարդ:*

*Ուկրաինայի նախագահը հրամանագիր է ստորագրել, որով մարտի 5-ը սգո օր էր հայտարարվել Դոնեցկի Զասյադկոյի անվան հանքում զոհված հանքագործների հիշատակին:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ




*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին մարտի 2-ին հանդիպում ունեցավ երկրի տնտեսական իրավիճակի մոնիտորինգի իրականացման նպատակով, Վրաստանում գտնվող Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչների հետ:*

Հանդիպմանը քննարկվեցին երկրում ստեղծված տնտեսական իրավիճակի ու Վրաստանի կառավարության կողմից ծրագրված միջոցառումների հարցերը: Քննարկվեցին նաեւ տարածաշրջաններում առկա իրավիճակի եւ երկրի էկոնոմիկայի վրա ազդեցություն գործող մյուս գործոնների հարցերը: Ինչպես նշվեց հանդիպմանը, առաքելության շրջանակներում այն, երկրի կառավարության ու Ազգային բանկի հետ համատեղ, իրականացնելու է տնտեսական գործընթացների, մակրոտնտեսական պարամետրերի եւ առկա ռիսկերի վերլուծությունը:

Արժույթի միջազգային հիմնադրամի առաքելության ներկայացուցիչների հանդիպմանը մասնակցեցին նաեւ Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ



## ՆՈՐ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

*Մարտի 4-ին Թբիլիսիի «Մարիոտ» հյուրանոցում անցկացվեց գլխավոր դատախազության համակարգում արդեն ավարտված դատավարությունների գործավարության հետաքննությունների նորակազմ դեպարտամենտի շնորհանդեսը:*

Շնորհանդեսին ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, գլխավոր դատախազ Գիորգի Բադաշվիլին, փոխվարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, խորհրդարանի, կառավարության եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Նորաստեղծ դեպարտամենտի նպատակն է հետաքննել հանրային ծառայողների կողմից կատարած իրավախախտումների ավարտված քննության գործերը, որոնց արդյունքում քաղաքացիներին հասցվել է ֆիզիկական եւ նյութական վնաս: Մասնավորապես, դեպարտամենտը կողմնորոշված կլինի այն հանցագործ փաստերի հետաքննությանը, որոնք նշված են 2012 թվականի հոկտեմբերի 1-ից հետո դատախազություն մուտք գործած դիմումներում: Դրանց թվում են առաջնահերթային այն գործերի հետաքննությունները, ինչպիսիք են հանրային ծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց կողմից թույլ տրված գույքի ապօրինի բռնագրավումն ու բռնության փաստերը, անմարդկային վերաբերմունքն ու կտտանքները:

Գլխավոր համակարգի նոր դեպարտամենտը կգլխավորի Իրակլի Նադարեիշվիլին, իսկ տեղակալը կլինի Կոկա Կացիտաձեն:

ԿՐԹԱԿԱՆ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ




*Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, դիվանագիտական կորպուսի, դոնորական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացրեց կոորդինացիոն հանդիպում:*

Կոորդինացիոն հանդիպումները պարբերական բնույթ կրեցին եւ նպաստեցին միջազգային եւ տեղական կազմակերպությունների ու կառավարության կողմից կրթության ոլորտում իրականացվող նախագծերի մասին տեղեկատվության փոխանակմանը:

Հաշվետու հանդիպման հիմնական թեման նվիրված էր ուսուցչի գործունեության, նրա մասնագիտական զարգացման ու պաշտոնական առաջընթացի, նախարարության կողմից մշակված սխեմայի ներկայացմանը:

Հրավիրված կազմակերպությունների ներկայացուցիչները խոսեցին արդեն իրականացված ընթացիկ ու ծրագրված կրթական նախագծերի մասին, որոնց նպատակն է աջակցել եւ ուժեղացնել կրթության ոլորտում իրականացվող նախագծերը:

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

## ԿԹՈՒՅԼԱՏՐՎԵՆ ՄԻԱՅՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

*Վրաստանում կթույլատրվեն միայն ֆիզիկական անձանց դրամական փոխադրումների դրամական սպասարկումները:*

Իրավաբանական անձինք որպես հարկային ծառայություններից օգտվողներ, կզրկվեն դրամական փոխանցումներ առաքելու կամ ստանալու հնարավորությունից:

Համապատասխան նորմն ավելացվելու է «Հարկային համակարգի եւ հարկային սպասարկումների մասին» օրենքում: Օրինանախագծի հեղինակն ազգային բանկն է, իսկ նախաձեռնողը՝ երկրի կառավարությունը:

Օրինանախագիծն արդեն ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը: «Գործող պրակտիկայի համաձայն, արտասահմանյան երկրներից իրականացվող փոխանցումների մի մասը, երբ այն իրականացվում է իրավաբանական անձի կողմից, ելնելով գործող օրենքից, հանդիսանում է հարկային սպասարկման դրամական փոխանցում, որի դեպքում փոխանցողն ու ստացողը կարող են լինել միայն ֆիզիկական անձինք: Հետեւաբար, այդ գործառույթին չի կարելի շնորհել դրամական փոխանցման կարգավիճակ եւ, համապատասխանաբար, արտացոլել միասնական վիճակագրության մեջ: Վերոնշյալ փոփոխությունը հնարավորություն է ընձեռում նման փոխանցումներն արտացոլել նման վիճակագրության մեջ: Զուգահեռաբար, կոնկրետացվում է, որ Վրաստանում թույլատրելի է միայն ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների սպասարկումը, իսկ իրավաբանական անձանց արգելվում է փոխանցել կամ ստանալ դրամական փոխանցումներ»,- ասված է օրինանախագծի բացատրական նամակում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԳՐԱՆՑՎԵԼ Է ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ԳՆԵՐԻ ԱՃ

*Վրաստանում աճել են մթերքների գները: Ինչպես IPN-ին հայտնել են մթերային խանութներում, բարձրանում է պարենամթերքի գրեթե բոլոր տեսակների արժեքը:*



Նրանց տեղեկատվության համաձայն՝ վերջին մեկ ամսվա ընթացքում բուսական յուղի գներն աճել են միջինը 50 թեթրիով: 25 թեթրիով թանկացել են շաքարավազը եւ հնդկաձավարը: Թանկացել են նաեւ քաղցրավենիքը, սուրճը, աղը, հիգիենայի միջոցներն ու լվացամիջոցները:

Բացի այդ, մարտի 1-ից թանկացել են ալկոհոլային խմիչքները, ինչը կապում են ակցիզի բարձրացման հետ: Առնվազն 20 տոկոսով աճել են օղու եւ գարեջրի գները, բացառությամբ «Նատախտարի»-ի: «Կոկա-կոլա»-ի բոլոր արտադրատեսակների արժեքն աճել է 10-25 թեթրիով: Նաեւ հացի գների բարձրացում է արձանագրվել: Հացի մի շարք գործարանների ղեկավարները որոշում են ընդունել ավելացնել իրենց արտադրանքի գները: Թբիլիսիի առանձին խանութներում հացամթերքներն արդեն 5 թեթրիով թանկացել են:

Ինչպես նշում է Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը, հացամթերքի թանկացումը համընդհանուր բնույթ չի կրում, հացի գինն ավելացրել են առանձին ընկերություններ, եւ առաջիկայում գնի աճ չի սպասվում:

Առեւտրի ներկայացուցիչների խոսքով՝ գներն աճել այն բանից հետո, երբ սկսել է արժեզրկվել լարին:



### ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԸ ՉԿԱՅԱՑԱՎ

*Փետրվարի 28-ին Վրաստանի խորհրդարանը չկարողացավ անցկացնել արտահերթ նիստ: Պատճառը քվորումի բացակայությունն էր: Շուրջ 76 պատգամավորներ չներկայացան նիստին:*

### ՀԱՄԱՆԵՐՈՒՄՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱՎ

*Ուժի մեջ է մտել վարչական տուգանքների հարցով հայտարարված համաներումը: Համաներման համաձայն, տուգանքներից լրիվությամբ ազատվում են այն անձինք, ովքեր մինչեւ հունվարի 1-ը առանց տոմսի ուղեւորության համար տուգանվել է մունիցիպալային տրանսպորտում: Ընդհանուր առմամբ, պետությունը իրավախախտողներին ազատում է մոտ 1 միլիոն 200 հազար լարի տուգանք վճարելու անհրաժեշտությունից: Համաներման արդյունքում տուգանքների վճարումից ազատվել է 20850 քաղաքացի:*

### ՆԵՐՈՒՄ՝ 188 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ստորագրել է ներման երկու հրամանագիր: Առաջին հրամանագրով փոխվել է ցմահ բանտարկության արժանացած երեք կանանց պատժաժամկետը: Նախագահի հրամանագրով, պատժաժամկետը սահմանվել է 20 տարով:*

*Երկրորդ հրամանագրով, նախագահը ներում է շնորհել 188 բանտարկյալի, որից 7-ը՝ անչափահասներ են: Ներման արժանացած 130 բանտարկյալներ արդեն ազատ են արձակվել բանտից:*

*Մայրության օրվա կապակցությամբ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ներում է շնորհել ութ կին բանտարկյալների: Ինչպես նշել են նախագահի նստավայրում, ներման արժանացած ութ կանանցից չորսն ազատ են արձակվում, իսկ մյուս չորսի պատժաժամկետը կիսվում է:*

### ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՆՈՐՄԻ ԽԱԽՏՈՒՄԸ ՉԻ ՏՈՒԳԱՆՎԻ

*Պետական լեզվի նորմի խախտման համար վարչական տուգանք չի սահմանվի: Նման դեպքերում, պետական լեզվի դեպարտամենտը իրավասու կլինի համապատասխան հանձնարարականներով դիմել պետական մարմիններին:*

*Դեռեւս անցյալ տարի խորհրդարանին ներկայացված «Պետական լեզվի մասին» օրինանախագիծը վերամշակվեց: Հիմնական շեշտը դրվեց լեզվի պահպանության վրա: Օրինանախագծի սկզբնական տարբերակում պետական լեզվի նորմի խախտման համար նախատեսված էին վարչական տուգանքներ, որ վերամշակման ժամանակ նախագծից հանվեց:*

### ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

*Թբիլիսիի քաղաքապետարանի վարչակազմի ղեկավար Ռեզո Չախավին եւ նրա տեղակալ Մարիամ Շելեգիան հրաժարական են տվել, պաշտոնաթող են եղել սեփական ցանկությամբ:*

*Նշենք, որ փետրվարին Վրաստանի ՆԳ նախարարությունը հայտնել էր Թբիլիսիի քաղաքապետարանի հսկողության ծառայության աշխատակազմի պետ Զոնկիա Բոդոկիայի ձերբակալման մասին՝ 50 հազար դոլարի չափով կաշառք վերցնելու համար:*

*Ըստ հետաքննության տվյալների՝ Բոդոկիան մասնավոր ընկերության ներկայացուցչից 180 հազար դոլար էր պահանջել հյուրանոց կառուցելու թույլտվություն ստանալու եւ շինարարության ընթացքում հովանավորության համար, եւ ձերբակալման պահին՝ որպես պահանջված գումարի կանխավճար, ստացել էր 50 հազար դոլար:*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՐԿԻՆ ԿՏՐՎԻ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՌՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վախեթիում գործում է արդարադատության մի տուն՝ Ախալցիխեում եւ համարվում էր, որ դա բավական է: Իսկ ես գտնում եմ, որ դա բավական չէ եւ Ախալքալաքիում էլ է պետք ունենալ նման հաստատություն:

Ընդգծում եմ. մեր կառավարության նպատակն է, որպեսզի վրաց լեզվի ուսուցումը բոլորի համար լինի մատչելի: Երիտասարդներին, ովքեր տիրապետում են պետական լեզվին եւ ապրում են շրջաններում, շատ ավելի դյուրությամբ կներգրավենք համակարգում եւ նրանք կունենան պաշտոնական առաջընթացի հնարավորություն: Ցանկացած պետությունում կարիերան եւ լավ աշխատանքն անմիջականորեն առնչվում են պետական լեզվի իմացության հետ: Մենք ցանկանում ենք ունենալ այնպիսի որակյալ կադրեր, ինչպիսին, օրինակ, Նինոծմինդացի նոտար Ռոման Կոստանյանն է, որը, ինչ խոսք, ընդմիշտ նոտար չի մնա: Համոզված եմ, որ նա կառաջադիմի, իսկ նրա փոխարեն, երբ կգնա թոշակի, կաշխատի ուրիշ անձ: Ախալքալաքիում մեր աշխատակից Ռուբեն Պալյանը նույնպես օրինակելի անձնավորություն է:

Օգտվելով առիթից, ցանկանում եմ դիմել Սամցխե-Ջավախեթիի հայ բնակիչներին. պետք չէ հրաժարվել Վրաստանի քաղաքացիությունից, քանի որ դուք այս երկրի զավակներն եք:

Փաստաթղթերի կարգավորման եւ առանձին ընտանիքների հիմնախնդիրների լուծման նպատակով մենք որոշեցինք ժամկետն երկարաձգել մինչեւ հուլիսի 1-ը: Այդ ընթացքում կկարգավորենք հաղորդակցությունը այս երկրամասում, եւ այդ հարցում մեզ մեծ օգնություն կարող է ցուցաբերել «Վրաստան» թերթը:

Ես կրկին անգամ կլինեմ Սամցխե-Ջավախեթիում, որպեսզի անմիջականորեն ծանոթանամ այս երկրամասի զավակների կարիքներին: Վերջին այցի ժամանակ, երբ Փոկայում էի, հանդիպեցի տեղի պատանիներին եւ խոստացա, որ նրանց կօգնեմ շրջագայել Վրաստանում, քանզի դա նրանց երազանքն է: Կփորձեմ իմ իրավասությունների շրջանակներում նրանց օգնել այդ գործում: Հնարավոր է մեր երկրում ոմանք ցանկանան, որ լինի լարվածության օջախ, սակայն ազգային փոքրամասնության ներկայացուցիչները, Վրաստանի բոլոր քաղաքացիները գիտեն, որ Վրաստանն իրենց հայրենիքն է, եւ մենք պատրաստ ենք օգնել նրանց, նպաստել, որ նրանք սովորեն լեզուն, ունենան առաջընթաց ու լավ ապագա մեր երկրում: Վրացական պետությունը հզոր է եւ աշխատում է նրանց համար, դրանում պետք է համոզված լինի մեր յուրաքանչյուր համերկրացին:

***- Իսկ այժմ այն հարցերը, որոնք առանձնակի հետաքրքրում են մեր ընթերցողներին: Որքանո՞վ է արդարացված «Արդարադատության նախարարությունը կվերականգնի՞ մեր քաղաքացիությունը» ձեւակերպումը:***

- Նախ եկեք որոշակի հստակություն մտցնենք քաղաքացիություն, քաղաքացիության ընդհատում, քաղաքացիությունից զրկում, քաղաքացիության շնորհում հասկացություններում:

Միանգամից ասեմ, որ բոլոր այդ հարցերը հստակորեն ներկայացված են Վրաստանի հիմնական օրենքում՝ երկրի Սահմանադրությունում: Հենց այդ օրենքի համաձայն, Վրաստանում ծնված, ապրող անձինք ստանում են Վրաստանի քաղաքացիություն: Ինչ վերաբերում է քաղաքացիության ընդհատման ու քաղաքացիությունից զրկելու հասկացություններին, ապա դրանք կարող են անձի նկատմամբ կիրառվել տարբեր շարժառիթներից ելնելով: Ինչ վերաբերում է քաղաքացիության շնորհմանը, ապա այն լրիվությամբ գտնվում է Վրաստանի նախագահի իրավասությունների շրջանակում, եւ ընդհանրապես, միայն երկրի նախագահն է իրավասու իր հրամանագրով այս կամ այն անձին շնորհել քաղաքացիություն կամ զրկել քաղաքացիությունից:

Ինչ վերաբերում է այն խոսակցություններին, իբր արդարադատության նախարարությունը կարող է վերականգնել անձի քաղաքացիությունը, ապա նման ձեւակերպումը սխալ է: Արդարադատության նախարարությունն իր ենթակառույցներում ընդունում է Վրաստանի նախագահի անունով գրված, քաղաքացիության վերականգնման մասին դիմումները, ապա մյուս, համապատասխան գերատեսչությունների հետ դրանց ընթացք է հաղորդում, ներկայացնելով եզրակացությունները, վերջնական որոշում ընդունելու իրավասությունը վերապահելով երկրի նախագահին:

***- Գուցե պարզաբանեք, թե ո՞ր դեպքում է ընդհատվում անձի Վրաստանի քաղաքացիությունը:***

- Վրաստանի Սահմանադրության 12-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, «Վրաստանի քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի, բացառությամբ սույն կետով նախատեսված բացառությունների: Վրաստանի նախագահի կողմից Վրաստանի քաղաքացիություն կարող է շնորհվել օտար երկրի քաղաքացուն, որը Վրաստանի առջեւ ունի բացառիկ ծառայություններ կամ նրան Վրաստանի քաղաքացիություն շնորհելը ելնում է պետության շահերից»: Սա քաղված է Վրաստանի Սահմանադրությունից, ինչը նշանակում է, որ երբ Վրաստանի քաղաքացիություն ունեցող անձը դառնում է այլ երկրի քաղաքացի, ապա նրա Վրաստանի քաղաքացիությունն ավտոմատորեն ընդհատվում է: Սա չի նշանակում Վրաստանի քաղաքացիությունից զրկում, ինչը արգելված է Վրաստանի Սահմանադրության 13-րդ հոդվածով: Դա նշանակում է քաղաքացիության ընդհատում այն պատճառով, որ Վրաստանի քաղաքացին ընտրել է այլ երկրի քաղաքացիությունը:



Վրաստանի քաղաքացիության ընդհատումը, ընթացակարգից ելնելով, հանդիսանում է արդարադատության նախարարության սպասարկումների զարգացման գործակալության գործառույթը, որին ներքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ, հանձնարարված է պաշտպանել Սահմանադրության 12-րդ հոդվածը:

***- Խոսակցություններ կան, իբր Սահմանադրության սույն պահանջի հիման վրա, վերջին տարիների ընթացքում տասնյակ հազարավոր էթնիկ հայերի Վրաստանի քաղաքացիությունն ընդհատվել է: Որքանո՞վ են դրանք համապատասխանում իրականությանը:***

- Ո՞վ է հնարել այդ թվերը, որտեղի՞ց են դրանք վերցրել: Ելնելով երկրի հիմնական օրենքի վերոնշյալ հոդվածի պահանջներից, օրինակ՝ 2014 թվականին Վրաստանի մասշտաբով 4692 անձի քաղաքացիությունն ընդհատվել է, որից 374-ը դարձել է Հայաստանի քաղաքացի, 2768-ը՝ Ռուսաստանի, 154-ը՝ ԱՄՆ-ի, 197-ը՝ Ադրբեջանի, 126-ը՝ Գերմանիայի, 255-ը՝ Ուկրաինայի, 355-ը՝ Հունաստանի, 69-ը՝ Թուրքիայի, 63-ը՝ Իսրայելի եւ այլն: 2015 թվականի սկզբից մինչ օրս նույն պատճառով ընդհատվել է շուրջ 1000 անձի քաղաքացիությունը: Այս թվերն իրատեսական են, ուստի անպատասխանատու ենք համարում այնպիսի թվերի շահարկումը, իբր Սամցխե-Ջավախեթիում այն հասնում է 50 կամ 10 հազարի եւ այլն:

Նշեմ նաեւ, երբ Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը՝ Հայաստանի կառավարության անդամների հետ պաշտոնական այցով գտնվում էին Վրաստանում եւ Վրաստանի վարչապետի հետ 2014 թվականի դեկտեմբերի 11-ին կայացած հանդիպմանը Հայաստանի պատվիրակությունը հաստատեց, որ Սամցխե-Ջավախեթիում մոտ 2 հազար Վրաստանի քաղաքացիներ ընդունել են Ռուսաստանի կամ Հայաստանի քաղաքացիություն: Հետեւաբար, մեր տվյալները համապատասխանում են միմյանց եւ անթույլատրելի է անհայտ պատճառներով այդ թվերի շահարկումը:

***- Ներկա դրությամբ փաստ է, որ այլ երկրի քաղաքացիություն ստանալու պատրվակով մեր համերկրացիներից շատերի Վրաստանի քաղաքացիությունն ընդհատվել է, իսկ դա բավականին մեծ անախորժությունների ծագման պատճառ է դառնում: Ինչպե՞ս օգնել նման մարդկանց, ի՞նչ են անելու նրանք քաղաքացիությունը վերականգնելու համար:***

- Թեպետ Վրաստանի Սահմանադրությունը հստակորեն սահմանում է այլ երկրի քաղաքացիություն ստանալու դեպքում Վրաստանի քաղաքացիության ընդհատման հարցը, սակայն Վրաստանի կառավարության առաջնահերթությունն է, որ Վրաստանի քաղաքացին լինի նա ազգությամբ վրացի, հայ կամ ադրբեջանցի, կամ այլ ազգի ներկայացուցիչ, թեկուզ նման ընտրություն կատարի եւ ստանա այլ երկրի քաղաքացիություն, հնարավորություն ունենա, որպեսզի կրկին դառնա Վրաստանի քաղաքացի: Դրա համար գոյություն ունի հետեւյալ ուղին՝ անձը դիմում է Վրաստանի նախագահին, որը որոշում է Վրաստանի քաղաքացիության շնորհման հարցը, ինչը անձին հնարավորություն է ընձեռում պահպանել այլ երկրի քաղաքացիությունը: Ասեմ, որ մայրաքաղաքի եւ Բաթումիի բնակիչները այդ հարցերով կարող են դիմել հենց տեղերում գործող Արդարադատության տներին, իսկ Սամցխե-Ջավախեթիի պարագայում, նախագահին ողղված դիմումը, համապատասխան փաստաթղթերը հասցեագրվում են Ախալցիխեի արդարադատության տանը, Ախալքալաքիում, Նինոծմինդայում գործող մեր ենթակառույցներին՝ սպասարկումների զարգացման տեղական ծառայություններին, նույնիսկ Նինոծմինդայի շրջանի Փոկա գյուղում գործող հասարակական կենտրոնին: Դիմումն ու համապատասխան փաստաթղթերն ուսումնասիրում են արդարադատության եւ ներքին գործերի նախարարության համապատասխան կառույցները, ապա հավաքվում է վերոնշյալ երկու գերատեսչությունների ու նախագահի ներկայացուցիչներից կազմված քաղաքացիության հանձնաժողովը, որը եւ կազմում է վերջնական եզրակացություն: Եթե եզրակացությունը դրական է, այն ներկայացնում են Վրաստանի նախագահին, որն ընդունում է վերջնական որոշում քաղաքացիության շնորհման կամ մերժման վերաբերյալ:

***- Վրաստանի քաղաքացիությունն ընդհատված անձինք, հուսահատված մեծ մասամբ արդեն դիմում են այսպես կոչված կեցության վկայականի ստացման համար, ինչը նրանց կարող է ազատել յուրաքանչյուր 90 օրը մեկ անգամ այլ պետության սահմանը հատելու եւ այնտեղ գտնվելու անհրաժեշտությունից: Եվ դա այն պայմաններում, երբ մշտապես բնակվում են Վրաստանում եւ նրանց ընտանիքների անդամները, մեր երկրի քաղաքացիները, Վրաստանում են ապրում: Ավելացնենք նաեւ, որ փետրվարի 19-ին Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում տեղացիների հետ հանդիպմանը Դուք տարակուսանք հայտնեցիք այն կապակցությամբ, որ կեցության վկայականի ստացման դիմումները շատ ավելի են, քան քաղաքացիության վերականգնման խնդրագրերը: Ի՞նչ կասեիք այդ մասին:***

- Կեցության վկայականի ստացման ընթացակարգը գրեթե նույնն է, ինչ քաղաքացիության ստացման ընթացակարգը: Թեպետ, անկեղծ ասած, ինձ համար մի փոքր տարօրինակ է, որ այդ մարդկանց մեծամասնությունը դիմում է կեցության թույլտվության համար: Իմ ցանկությունն է, որ հատկապես Սամցխե-Ջավախեթիի բնակիչներից շատ ավելի դիմումներ ներկայացվեն քաղաքացիության շնորհման վերաբերյալ, քան կեցության թույլտվության համար, քանի որ նրանք ծնվել ու մեծացել են Վրաստանում, այս երկրի զավակներն են: Սակայն, եթե նրանք գերադասում են ստանալ կեցության թույլտվություն, ապա ցանկանում եմ նրանց տեղեկացնել, որ կեցության վկայական ունեցող անձանց համար քաղաքացիության ստացումը հետագայում շատ ավելի դյուրին է, քանզի այդ անձինք արդեն անցած են լինում ընթացակարգը, նրանց գործի ուսումնասիրման համար շատ ավելի քիչ ժամանակ է պահանջվում եւ հաջողության հավանականությունը բավականին բարձր է:

Մեր կառավարության եւ իմ, որպես նախարարի առաջնահերթությունն է, որպեսզի ոչ մի ընտանիք չբաժանվի, եթե ծնողը ունի կեցության վկայական կամ նրան շնորհված է Վրաստանի քաղաքացիություն, ապա երեխան էլ պետք է ունենա նույնը, քանի դեռ անչափահաս է եւ չափահասության դեպքում ինքը անձամբ կորոշի իր քաղաքացիության հարցը: Մենք նպաստում ենք նաեւ, որ Հայաստան կամ Ռուսաստան գնացած մեր նախկին քաղաքացիները կարողանան վերադառնալ եւ միանալ իրենց ամուսիններին ու զավակներին, իրենց ընտանիքներին:

Իսկ ինչ վերաբերում է կոնկրետ թվերին, ապա ասեմ, որ 2014 թվականի սեպտեմբերի մեկից մինչ օրս միայն Սամցխե-Ջավախեթիից կեցության ժամանակավոր կամ մշտական թույլտվության ստացման խնդրանքով դիմել է 2519 քաղաքացի: Գրանցված դիմումների 95 տոկոսը արդեն բավարարվել է:

Ավելացնեմ նաեւ, որ Վրաստանի մասշտաբով Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանը յուրովին բացառություն է անձնական փաստաթղթերի խառնաշփոթության առումով: Որքան էլ տարօրինակ լինի, շատերի մոտ, պատկերացրեք, դեռեւս խորհրդային անձնագրերն են: Ստիպված ենք գործել նաեւ այդ ուղղությամբ: Բնականաբար, որոշակի քայլեր արդեն կատարել ենք:

***- Սամցխե-Ջավախեթիում հանդիպումների ժամանակ Դուք բազմիցս նշեցիք, որ Ձեր գլխավորած գերատեսչությունը ակտիվորեն համագործակցում է Վրաստանի խորհրդարանում տարածաշրջանը ներկայացնող՝ ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական պատգամավորների հետ:***

- Դա, իրոք այդպես է: Ընդհանրապես փաստաթղթերի հետ կապված հարցերի կարգավորման հարցով սկսեցինք սերտորեն համագործակցել Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանի հետ: Համատեղ գործունեության արդյունքներն առավել քան նշանակալից էին: Ասածի պարզ օրինակն է տիկին Ժաննա Սքոյանը, որի մասին ինձ ասաց պատգամավոր Հենզել Մկոյանը: Ժաննան գնացել էր Հայաստան, ուշադրություն չէր դարձրել փաստաթղթերի վրա, Վրաստանի օրենքների մասին սուղ տեղեկություններ ուներ եւ այնտեղ մնաց: Իսկ այստեղ նրան սպասում էին տասը տարեկան երեխան ու ամուսինը: Մենք արտաքին գործերի եւ ներքին գործերի նախարարությունների հետ համատեղ, աշխատեցինք եւ, չնայած նրա փաստաթղթերում առկա բարդություններին, նրան կարողացանք վերադարձնել Վրաստան:

Ներկայումս այդ հարցով սերտ համագործակցություն են իրականացնում Ախալքալաքի եւ Նինոծմինդայի պատգամավորներ Սամվել Պետրոսյանի ու Հենզել Մկոյանի տեղերում գործող բյուրոների հետ: Այս գործին ակտիվորեն ներգրավվել է նաեւ «Վրացական երազանքից» խորհրդարանի համամասնական պատգամավոր Ռուսլան Պողոսյանը:

Այս եւ շատ այլ օրինակները ցույց են տալիս, որ մեր պարբերական կապերը Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Ռուսլան Պողոսյանի, Հենզել Մկոյանի եւ Սամվել Պետրոսյանի հետ պետք է շարունակվեն եւ դրանք արդյունավետ են:

***- Շնորհակալություն հետաքրքիր զրույցի համար: Հուսով ենք, որ Դուք կրկին անգամ ժամանակ կգտնեք մեր ընթերցողներին հետաքրքրող մյուս հարցերին առաջիկայում պատասխանելու համար: Օգտվելով առիթից, թերթի խմբագրության աշխատակիցների ու ընթերցողների անունից շնորհավորում ենք Ձեզ՝ Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի առթիվ, մաղթում քաջառողջություն եւ հաջողություններ:***

*ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ*